ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2012

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *օ:***

1) հն-րյա, փայտ-ջիլ, միջ-ռեական, օրեց-ր
2) նախ-ռոք, աշխարհազ-ր, ազգ-գուտ, գիշեր-թիկ
3) հանապազ-ոդ, ան-թևան, թախծ-ռոր, ականջ-ղ
4) հանապազ-ր, առ-րյա, ան-ռինություն, ոսկեզ-ծ

2 **Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերում է գրվում *մ:***

1) ա-պագոռգոռ, ա-բաստանել, ը-պանակ, ջրա-բար
2) ա-բարտավան, ինքնա-փոփ, ա-բարտակ, ա-բարձիչ
3) շա-փուր, Մա-վել, բա-բասել, ս-բուկ
4) ը-բռնել, բա-բ, ը-բոստ, կշտա-բել

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում *յ.***

1) ժողովածու-ով, թե-ման, Սերգե-ից, գա-թել
2) անց-ալ, լռել-այն, հա-եցողության, եղ-ամ
3) վա-ելուչ, Հռիփսիմե-ի, նա-իրյան, պահածո-ի
4) արքա-ություն, կակաո-ի, թու-լատրել, հր-ա

4 **Ո՞ր շարքում ուղղագրական սխալ *չկա.***

1) դշխեմ, սրդոդած, տարերք, ընչացք
2) երփներանգ, լվածք, անհեթեթ, վիթ
3) արհավիրք, անբասիր, հեղեղատ, կխտար
4) բարվոքել, սուսամբար, ճմրթված, սիբեխ

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերի ընդգծված *ո*-ն է արտասանվում *օ:***

1) ան<u>ո</u>րակ, ան<u>ո</u>ղոք, մարդա<u>ո</u>ս, ութ<u>ո</u>տնուկ
1) ան<u>ո</u>ռոշ, սառն<u>ո</u>ռակ, վաղ<u>ո</u>ռդայն, կրծ<u>ո</u>սկր
2) տար<u>ո</u>ռոշել, հնա<u>ո</u>ճ, ձկն<u>ո</u>ս, ան<u>ո</u>ռսալի
3) քաջ<u>ո</u>ռդի, ան<u>ո</u>ղնաշար, հանապազ<u>ո</u>ռդ, արջա<u>ո</u>ս

6 **Ո՞ր շարքում միասին, անջատ, գծիկով գրության սխալ կա.**

1) մայրիշխանություն, ռոմանագերմանական, նորարեշցի, առօրյա-խոսակցական
2) քաջառողջություն, երեքսենյականոց, քարեղարյան, սանկտպետերբուրգցի
3) սրբություն-սրբոց, մի երկու, կիլոմետր-ժամ, հինգհազարանոց
4) տուն-թանգարան, նկարիչ-ձևավորող, հուշ-երեկո, հեռու-հեռավոր

7 **Ո՞ր շարքում մեծատառի գործածության սխալ չկա:**

1) ազգային պատկերասրահ, ազգային գրադարան, Կուլոնի օրենք, մարտական խաչ շքանշան
2) Կիրակոս Գանձակեցի, Զանգեզուրի լեռնաշղթա, Իրանական լեզուներ, Ծաղկունյաց լեռնաշղթա
3) Լեռ Կամսար, Համազգայինի թատրոն, Հյուսիսային Իռլանդիա, Բրիտանական թանգարան
4) Լորդերի պալատ, Հասարակածային Գվինեա, մեծ Պարնի, մաշտոցյան այբուբեն

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կա երկհնչյունի հնչյունափոխություն.**

1) զուգահեռ, շահութաբեր, կենսագիր, կուսական
2) սփռված, ալեզարդ, գուժկան, տարակուսանք
3) ուխտադրուժ, ատամնաբուժարան, խուզարկու, հրապուրիչ
4) կառուցել, լծակից, լուծարել, ատենապետ

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառաձևերի) վերջին վանկն է շեշտվում:**

1) գրեթե, համալսարանից, սենյակում, սափոր
2) ապերջանիկ, ժողովածուի, կայծակնահար, իտալացի
3) բազմոց, արեգակը, ուսուցչուհուն, որտեղ
4) վարագույր, լուսանկար, ուսուցիչ, վերջ տալ

10 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ *կա*:**

1) Մի շարք երկրներում ընդունված է եղել շուշանի պատկերով խարամ դնելը:
2) Վանատուրը՝ իբրև աստված, խորհրդանշել է հայ մարդու ասպնջականությունը:
3) Աստանդական կյանքը այնքան տառապանք էր պատճառել նրան, որ հայրենիք վերադառնալուց հետո մեկուսացել ու դարձել էր տնակյաց:
4) Պետրոս Կամսարյանը թյուր կարծիք ուներ հայ գյուղի ու նրա կենցաղի մասին:

11 **Ո՞ր նախադասության մեջ *զարդարել* բառը փոխաբերական իմաստով չի գործածվել:**

1) Երգչուհին իր ներկայությամբ զարդարեց ողջ հանդիսությունը:
2) Համեստությունը զարդարում է մարդուն:
3) Լեփ-լեցուն դահլիճը զարդարված էր շքեղ լույսերով:
4) Այդ փոքրիկ, թովռան աղջնակը զարդարում էր պապիկի ծերությունը:

12 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանում տրված դարձվածքներն ու դրանց բառիմաստները:**

ա. լեզուն կապ ընկնել	1. մխիթարել
բ. սիրտ տալ	2. ծնվել
գ. աշխարհ գալ	3. կործանել
դ. երեսով տալ	4. հիշեցնել
	5. պապանձվել

1) ա - 5, բ - 1, գ - 2, դ - 4
2) ա - 4, բ - 1, գ - 3, դ - 5
3) ա - 5, բ - 1, գ - 4, դ - 3
4) ա - 3, բ - 2, գ - 5, դ - 1

13 **Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) ճապաղ- երկարաշունչ, առաքուր-զինված, սխալ-թյուր
2) ամբարտավան-սնապարծ, պաճուճանք-զարդարանք, կարծեցյալ-թվացյալ
3) պարզորոշ- ակնհայտ, աչառու-կողմնակալ, դժնի-անագորույն
4) լայնախոհ-ազատամիտ, գործարար-ձեռներեց, մեծատուն-ունևոր

14	**Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են հականիշներ.**

1) գիտուն-թերուս, նոսր-խիտ, ծածկամիտ-բացբերան
2) բուժիչ-ախտածին, օրհնել-բանադրել, կարծրատիպ-ազատախոհ
3) նշանակալի-չնչին, հիասթափություն-ոգևորություն, խելամիտ-անկշռադատ
4) շնորհաշատ-տաղանդազուրկ, աղմկոտ-հանդարտ, պղծված-սրբագործված

15	**Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) խաղող, բարի, նոճի, ամառ
2) քույր, գլխարկ, ցորեն, արդար
3) միրգ, հատված, ամրոց, մարագ
4) դեղձ, կարմիր, ծիրան, հրապարակ

16	**Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:**

1) ամրոցամերձ, շողարձակ, կրափոշի, կարգազանց
2) նրբաքիմք, ռամկավար, առատաձեռն, կատվառյուծ
3) յուրօրինակ, գրադարակ, մանկամարդ, տիկին
4) ազատամիտ, բեռնատար, արձակագիր, ձեղնահարկ

17	**Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

1) այգեպատ, սևաչյա, լուսահորդ, կորամեջք
2) այգեգործ, բարեգութ, ալեծուփ, հմայագեղ
3) ցորնամորթ, հնադար, շողակն, հոգեորդի
4) հոգատար, հարաճուն, գարեջուր, անբարետես

18	**Պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

1) Գոյականը ունի վեց արտաքին և երկու ներքին հոլովումներ:
2) Ի տարբերություն գոյականների՝ մի շարք դերանուններ հոլովվելիս փոխում են արմատը:
3) Հայերենում կան նաև մի շարք գոյականներ, որոնց հոլովումը շեղվում է ընդհանուր կանոններից: Սրանք, այսպես կոչված, այլաձև հոլովումներն են:
4) *Սյուն, ձյուն, քաջություն, տուն, անուն, Վարդանանք, մայր, եղբայր, խաչեղբայր, հարություն* բառերը ենթարկվում են ներքին հոլովման:

19	**Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

1) շողակներ, չվերթեր, հորաքույրեր, ուսմունքներ
2) ցուցասրահներ, խաղատներ, պատվիրատուներ, դասալիքներ
3) ստեղնաշարեր, կնքահայրեր, սկիհներ, խմբագրեր
4) հանցանշաններ, գիսաստղեր, լրագրեր, հացթուխներ

20	**Ո՞ր նախադասության մեջ թվական կա:**

1) Նրան պատասխանեց կոչնակի ձայնը, որ քանի՜ անգամ լսելի եղավ եկեղեցու բարձրությունից ու հիշեցրեց ճաշի ժամը:
2) Տասնյակ ձիավորներից առանձնացավ դրոշակակիրը, որը հանեց գոտուց քարշ ընկած շեփորը և հնչեցրեց:
3) Քսանամյա արքայազնը նստեց բազմոցին, և կրկին ջերմ արտասուքը սկսեց հեղեղի նման թափվել նրա աչքերից:
4) Ոչ հեռավոր անցյալում՝ քառորդ դար առաջ, այստեղ հարթ ու հողածածկ տանիք չուներ միայն հինավուրց գմբեթարդ եկեղեցին:

21	**Ո՞ր տարբերակում է ընդգծված դերանունը առարկայի հատկանիշ ցույց տալիս:**

1) **Ուր** էլ լինեմ, չեմ մոռանա, ես ողբաձայն երգերը մեր:
2) **Ինչքա՜ն** ցավ եմ տեսել ես,
   Նենգ ու դավ եմ տեսել ես:
3) Ախր ես **ինչպե՞ս** վեր կենամ գնամ,
   Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
4) **Ի՜նչ** են տարել նրանք կյանքից, թե ի՜նչ տանես դու քեզ հետ…

22	**Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):**

1) վերակառուցել, արտահայտել, սառչել, մեծանալ
2) կանչել, ննջել, շնչել, սրբագրել
3) ջարդել, հուզվել, հոգալ, գալ
4) ցատկոտել, լուսավորել, ավարտել, ծամել

23	**Ո՞ր նախադասության մեջ վաղակատար ձևաբայ (կախյալ դերբայ) չկա:**

1) Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ...
2) Ինչպե՞ս կարող էր հանգիստ նստել, երբ արդեն գիտեր այդ մասին:
3) Նրանց ձգված մկաններում ուժն է նստել խոնավ հողի...
4) Խռնվել են հազարանուն ամբոխները խելագարված:

24	**Ո՞ր շարքում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սխալ չկա:**

1) փախա, թռցրեցի, դիպա, հասկացա
2) թռչեցի, մարեցին, գոհացավ, սևացրի
3) մտցրի, մոտեցրի, կորանք, հիշեցրի
4) մտան, պրծանք, ասեցի, հավատացրի

25	**Ո՞ր տարբերակում մակբայ չկա:**

1) Իմ աչքերի մեջ այնքա՜ն կրակներ եմ մարել ես…
2) Կանչում է կըրկին, կանչում անդադար
   Էն չըքնաղ երկրի կարոտը անքուն:
3) Ու սիրում ենք առավոտից իրիկուն
   Ճամփա երթալ ու հավիտյան երազել…
4) Կբանան ոմանք իմ գիրքը գուցե,
   Կթերթեն դանդաղ, կկարդան տողեր:

26 **Ո՞ր տարբերակում է *հեռու-ն* հանդես եկել որպես կապ:**

1) Ոչ ոք չէր կարծում, որ տարիներ հետո նա կլինի այդքան հեռու:
2) Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ աչքս է հեռուն…
3) Լինե՞ր հեռու մի անկյուն,
   Լինե՞ր մանկան արդար քուն:
4) Երկար տարիներ լինելով հայրենիքից հեռու՝ նա տառապում էր մի հիվանդությամբ, որ կոչվում է կարոտախտ:

27 **Ո՞ր տարբերակում դերանունով արտահայտված որոշիչ չկա:**

1) Ուրիշ բլբուլ կգա կմտնի բաղը,
   Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը:
2) Ու մշուշոտ մեր աչքերը հավիտյան
   Որոնեցին պատահական աչքերում
   Հարդագողի ուղիները ոսկեման…
3) Հոգնել եմ ամեն հովից թեքվելուց,
   Հոգուս մեջ հոգուս ցավը հեգնելուց,
   Ինքս իմ ստվերից ահաբեկվելուց:
4) Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան,
   Եվ այնքա՜ն ներում- ո՞ր երկրի սրտում:

28 **Ո՞ր տարբերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված :**

1) Ամեն ինչ դարձել է անցյալ,
   Ու մենք առափնյա այգում ենք դարձյալ: *(անորոշ դերանուն)*
2) Իմ տխուր հոգում ծագում է ոսկի
   Ճաճանչը հուսո հարատև կյանքի: *(գոյական)*
3) Մանուկ պահելը ծանր է ավելի: *(անորոշ դերբայ)*
4) Անդարձ կորել է սրտիս խնդումը,
   Թունոտ մի մեգ է իջել հոգում իմ: *(գոյական)*

29 **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ չկա:**

1) - Առաջարկներիդ հետ լիովին համաձայն ենք,- ասաց տնօրենը:
2) Նրա բոլոր ձեռնարկումներին մերձավորները միշտ սատարում էին:
3) Արածդ սխալի համար պիտի ներողություն խնդրես հորդ:
4) Ձու գողացողը ձի էլ կգողանա:

30 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

1) Կարծում եմ, որ մեր կյանքում մշտապես միանում են ճակատագիրն ու կամքի ազատությունը:
2) Իսկ դա էլ հենց առողջության և ուժի նշաններն են՝ բնության ամենաքնքուշ պարգևները:
3) Իմ ունեցածի մի զգալի մասը կորավ այդ գիշեր, երբ ես այդքան անփույթ էի ոչ միայն իմ անցյալի ու ներկայի, այլև ապագայի նկատմամբ:
4) Եվ բնական էր, որ նրա մտքերը, ցանկություններն ու ձգտումները կենտրոնանում էին միայն մի մտքի շուրջ:

31 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Իսկ հոկտեմբերի տասնիններին՝ ճամփորդության չորրորդ ամսում, ձյունն այնպես առատորեն տեղաց, ...:

1) որ իրար խառնեց ճամփա ու կածան:
2) ասես իրար խառնելով ճամփա ու կածան:
3) կարծես չպիտի իրար խառնվեին ճամփա ու կածան:
4) որով իրար խառնվեցին ճամփա ու կածան:

32 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:**

1) *Ճանապարհի եզրերին էլեկտրասյուներ կան, որ լույս են տանում լեռների ծալքերում ծվարած գյուղերին:*
   Ճանապարհի եզրերին լեռների ծալքերում ծվարած գյուղերին լույս տանող էլեկտրասյուներ կան:
2) *Նկարիչը հորս միջոցով հավաքվածներին խնդրեց, որ հեռանան, գնան իրենց տները:*
   Նկարիչը հորս միջոցով հավաքվածներին խնդրեց հեռանալ, գնալ իրենց տները:
3) *Շատերը չէին հավատում, որ Աղասի Խանջյանը ինքնասպանություն է գործել:*
   Շատերը չէին հավատում Աղասի Խանջյանի՝ ինքնասպանություն գործելուն:
4) *Որքան կոպիտ ու առնական են մեր լեռները, այնքան քնքուշ ու մեղեդային են մեր լեռնցիների երգերը:*
   Մեր լեռները կոպիտ ու առնական են մեր լեռնցիների երգերի տխուր ու մեղեդային լինելու չափ:

33 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական նշան չպետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Տնտեսուհին որևէ լուրջ գործ ձեռնարկելիս ջանում էր ամենքին ցույց տալ գործին տիրապետելու իր առանձնահատուկ շնորհը:
2) Ոչ ուրախ ու զվարթ տեսք ես չունեի այդ չարաբաստիկ օրը:
3) Պատանեկան անմոռանալի այդ հուշը սակայն երբեք չի խամրի:
4) Քնելուց առաջ պապս ինձ պատվիրեց առավոտյան ավելի կանուխ վեր կենամ:

34 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

1) Նա, անակնկալի գալով, գրեթե ցնծաց, երբ մի պահ հանկարծ զգաց, որ կարողանում է թղթի վրա մարդկանց դիմագծեր ուրվագծել՝ անգամ աչքերը փակած:
2) Մենելայոսը գրկաբաց ընդունեց եկվորներին և հյուրընկալության հենց առաջին օրը նրանց պատվին մի ճոխ խնջույք կազմակերպվեց, որը ժամեր անց՝ կեսգիշերին, վերածվեց արբշիռ գինարբուքի:
3) Ինչևէ, փաստն այն էր, որ պայթյունը միայն թեթևակի ցնցել էր շենքը՝ թողնելով այն անվնաս մնա, բայց դժոխային մեքենայի՝ սարսափ առաջացրած պայթյունից հրդեհ էր բռնկվել:
4) Երբ արդեն ներսում էր, ասաց, որ քաղցած չէ, ուզում է քնել. նա ամեն կերպ ճգնում էր կռահել՝ այդ վատ բանը կատարվե՞լ է, թե՞ ոչ:

35 **Ո՞ր նախադասության մեջ *և*-ից առաջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Նրանք երկար սպասում էին և երբ հայտնվում էր որսը նրանցից մեկը դիպուկ նշանառությամբ սպանում էր գազանին:
2) Հայոց արքայի Տիգրան Մեծի և Միհրդատ Պոնտացու դաշինքին տեղյակ էին հակառակորդները բայց պահանջում էին հանձնել վերջինիս:
3) Արևը նայում է պատուհանիս և խաղում է կոպերիս վրա ես նորաբույր գարնան անսովոր ջերմությունն եմ զգում:
4) Ծովը արթնանում է երբ արևելքում ծիրանագույնով է վառվում արևը և ոսկեորում ալիքները:

36 **Տրված հատվածում նշված պատկերավորման-արտահայտչական միջոցներից ո՞րը գործածված չէ:**

Հանգստի ժամին լինում է միշտ տանջահար, հոգնած,
Խրախճանքի մեջ՝ տխուր ու տրտում,
Դեմքով միշտ ժպտուն, բայց մտքով խոցված,
Տեսքը ծիծաղկոտ, աչքը ողբի մեջ,
Արտաքուստ թեև ձևանում է հանգիստ, սփոփված,
Բայց արտասուքը լուռ վկայում է կսկիծը սրտի:

1) հակադրություն
2) մակդիր
3) փոխաբերություն
4) համեմատություն

37 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Նրանք այլևս չէին ուզում աշխատել օրական 10-15 ժամ, ապրել քաղաքի հետնախորշերում, աներևակայելի կեղտի ու նեղվածքի մեջ:
2. Այդ օրը ամերիկյան Չիկագո քաղաքում բանվորները դուրս չեկան աշխատանքի:
3. 1886թ. մայիսի մեկն էր:
4. Մեկտեղ հավաքված՝ նրանք կապիտալիստներից պահանջեցին ութժամյա աշխատանքային օր, աշխատավարձերի բարձրացում և կենսապայմանների բարելավում:

1) 1, 2, 3, 4
2) 4, 1, 2, 3
3) 3, 2, 1, 4
4) 2, 4, 1, 3

38 **Ո՞ր տարբերակը արևմտահայերենով չէ:**

1) «Իր մեծ ու քայքայիչ տխրություններեն զատ Նարեկացին ունի նաև հիվանդագին մելամաղձություններ. աղերսարկու, միջանկյալ բացասականներու թախծությունը՝ որ հոս հոն մանիշակի պես կը նշուլե...»:
2) «Հոս պատկերի խիստ ու նկարչական ճշգրտությունը մը կա, իր մանրամասնություններուն ու ամբողջական ներկայացումին մեջ ալ՝ այնքան հուժկու և իրախնդիր՝ որ նմանությունը հրաշալի կերպով կ՛անձնացնե...»:
3) «Վանականին քերթվածն է աս, պարզ, և սակայն ամբողջական հոգեբանությամբ մը, միստիկականության ցավագին վեպ մը, ուր կտեսնենք սիրով լեցված էակ մը՝ աստուծո տարփանքովը վառված, որ անոր մեծությունը կերգե...»:
4) «Ինչի՞ գեղինը չիմ մտնում էս սհաթիս: Էլ իմ տոլ ախչկերանց էրեսին վո՞ւնց պիտի մտիկ անիմ. դիփունանց խոսելու պիտի դառնամ, դիփունքը մասխարա պիտի գցին ինձ, դիփունքը պիտի վրես ծիծաղին...»:

39 **Թվերի ո՞ր դասավորությունն է ճիշտ արտացոլում նշված հայ պատմիչների երկերում ընդգրկված ժամանակաշրջանը:**

ա. Փավստոս Բուզանդ	1. 3-րդ դարի վերջից 4-րդ դարի սկիզբը
բ. Ագաթանգեղոս	2. 4-րդ դարի վերջից 5-րդ դարավերջը
գ. Ղազար Փարպեցի	3. 4-րդ դարի 30-80-ական թվականները
դ. Մովսես Խորենացի	4. հայ ժողովրդի ծագումից մինչև 5-րդ դարի առաջին կեսը

1) ա - 1, բ - 2, գ - 3, դ - 4
2) ա - 2, բ - 1, գ - 4, դ - 3
3) ա - 3, բ - 1, գ - 2, դ - 4
4) ա - 1, բ - 3, գ - 2, դ - 4

40 **Տրված հատվածը «Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերոսուհու գեղեցկությունն է պատկերում:**

Կ՚իրիշկեմ՝ էնոր էղնգներ ռանդայով տաշած է.
Ա՜խ, հալա տգո՛, ռանդայով տաշած է…
Կ՚իրիշկեմ՝ էրեսի կարմրություն նռան գինի է,
Ա՜խ, հալա տրգո, նռան գինի է...

1) Ծովինարի
2) Խանդութի
3) Գոհարի
4) Դեղձուն-Ծամի

41 **Ո՞ր հեղինակը որ դարաշրջանում է ապրել ու ստեղծագործել:**

ա. Նահապետ Քուչակ	1. 18-րդ դար
բ. Սայաթ-Նովա	2. 13-րդ դար
գ. Հակոբ Պարոնյան	3. 19-րդ դար
դ. Խաչատուր Աբովյան	4. 16-րդ դար

1) ա-4, բ-2, գ-3, դ-1
2) ա-4, բ-2, գ-1, դ-3
3) ա-2, բ-4, գ-1, դ-3
4) ա-4, բ-1, գ-3, դ-3

42 **Ո՞ր գրողի խոսքն է.**

«Ամեն մի գործ ստեղծելու ժամանակ իմ աչքի առաջ ունեցել եմ հայ ժողովուրդը, նրա անցյալը, նրա պատմությունը, նրա տխուր ներկան, լավ եմ գրել, թե վատ, նրա համար եմ գրել, նրան եմ կամեցել իմ մտքերն ու զգացումները հաղորդել»:

1) Ռաֆֆու
2) Մուրացանի
3) Դերենիկ Դեմիրճյանի
4) Եղիշե Չարենցի

43 **Ո՞ր շարքի բոլոր հերոսուհիներն են միայն Ռաֆֆու «Սամվել» պատմավեպից:**

1) Համազասպուհի, Գոհար իշխանուհի, Շուշանիկ
2) Սաթենիկ, Վահանդուխտ, Տաճատուհի
3) Փառանձեմ թագուհի, Շահանդուխտ, Ձվիկ
4) Զարմանդուխտ, Որմիզդուխտ, Սահականույշ թագուհի

44 **Ալեքսանդր Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայից մեջբերված խոսքերից ո՞րը որ հերոսինն է:**

1. «Ի՞նչ պիտի մտածեն, կասեն, որ Էլիզբարյանը գող էր և այժմ, դատաստանից վախենալով, գողացածը ետ է տալիս: Արի ու այն ժամանակ երևացիր հասարակության մեջ: Աչքերդ թքով կհանեն»:
2. «Ես ուզում եմ լինել հզոր ֆինանսական այուն, մեկը այն հսկաներից, որոնց ձեռքում է մեր ժամանակի ամենամեծ ուժը՝ կապիտալը»:
3. «Մեր փողը կեղտ է, նրա փչացնելը մեղք չէ»:
4. «Մարդս անասուն է, ցեխի մեջ որ տեսնես, պետք է ոտքով խփես, խորը գցես, ոչ թե ձեռքից բռնես, բարձրացնես»:

ա) Սուրեն
բ) Անդրեաս Էլիզբարյան
գ) Բագրատ
դ) Սաղաթել

1) ա-2, բ-4, գ-3, դ-1
2) ա-3, բ-1, գ-2, դ-4
3) ա-3, բ-4, գ-2, դ-1
4) ա-3, բ-1, գ-4, դ-2

45 **Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

1) «Ես»-ի անանուն հերոսը, չկարողանալով դիմագրավել սիրած աղջկա դավաճանության հետևանքով ունեցած դժվարություններին, ընկնում է կյանքի հատակը՝ դառնալով հարբեցող և մութ գործեր պաշտպանող փաստաբան:
2) Զուլետտան Անտոնիոյին առաջարկում է դառնալ իր եղբայրը և բնակվել իրենց մեծահարուստ ընտանիքում, սակայն տղան մերժում է:
3) Անտոնիոն դառնում է աշխարհահռչակ երգիչ, որի ոտքերի առջև ծնկի է գալիս Զուլետտան:
4) Զուլետտայի անհոգի երկտողը մեծապես օգնում է Անտոնիոյին՝ շարունակ վեր բարձրանալու և սիրային մաքուր հարաբերություններում դասային խտրականություն դնող երբեմնի օրիորդին իր առջև ծնկի բերելու:

46 **Նշել բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականության տարբերակը:**

ա. Ու լեռնային վրտակների
բ. Հընչյուններով դյութական
գ. Մրտան կաղնին հաստաբուն
դ. Կանչում էին հրրաշալի
ե. Անտես, անհետ չրքացան
զ. Ալիքները պաղպաջուն
է. Ու հենց շողաց ցոլքն արևի
ը. Խոր սուզվեցին ակն աղբյուրի

1) է, գ, ա, զ, դ, բ, ը, ե
2) ը, զ, ա, գ, է, դ, բ, ե
3) ը, գ, է, ե, դ, ա, բ, զ
4) դ, բ, է, ե, ը, գ, ա, զ

47 **Ո՞ր պնդումը ճիշտ չէ Վահան Տերյանի ստեղծագործության վերաբերյալ:**

1) «Մթնշաղի անուրջներ» շարքում կան տխրության, թախծի տրամադրություններ, ինչպես նաև գարնան պատկերներ:
2) Վ. Տերյանը ևս իր բանաստեղծությունները դասավորեց շարքերի մեջ՝ հետևելով Հովհ. Թումանյանին և Ավ. Իսահակյանին:
3) «Երկիր Նաիրի» շարքում բանաստեղծն արտահայտել է տագնապ հայրենիքի ապագայի համար, կարոտ հայրենիքի, հայրենի գյուղի հանդեպ:
4) Վահան Տերյանը գրել է նաև սոնետներ, տրիոլետներ և գազելներ:

48 **Ո՞ր շարքի բոլոր ստեղծագործություններն են Ավետիք Իսահակյանինը:**

1) «Մի մրահոն աղջիկ տեսա», «Հայրենիքիս հետ», «Սև-մութ ամպեր», «Համբերանքի չիբուխը»
2) «Օտար, ամայի ճամփեքի վրա», «Հայրենիքիս», «Հայրենի հողը», «Ոսկեհանդերձ եկար»
3) «Աբու-Լալա Մահարի», «Լիլիթ», «Հայոց լեռներում», «Սաադիի վերջին գարունը»
4) «Դարդս լացեք», «Ասպետի սերը», «Արագածին», «Ռավեննայում»

49 **Եղիշե Չարենցի նշված ստեղծագործություններից ո՞րը ինչ ժանրի գործ է:**

ա. «Դանթեական առասպել»	1. բալլադ
բ. «Գանգրահեր տղան»	2. բանաստեղծություն
գ. «Տաղ անձնական»	3. պոեմ
դ. «Հարդագողի ճամփորդները»	4. չափածո նովել

1) ա-2, բ-4, գ-1, դ-3
2) ա-3, բ-4, գ-2, դ-1
3) ա-1, բ-3, գ-4, դ-2
4) ա-3, բ-2, գ-1, դ-4

50	**Տրված բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակի ստեղծագործությունից է:**

ա. Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների,
Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ,
Գնամ ետևից ծիծեռնակների,
Նրանց հետ ետ գամ, գարունը բերեմ:

բ. Արևոտ մի սար եմ հիշում՝
Ճակատին ձյունի պատառիկ,
Սարն ի վար բարակ մի առու՝
Շուրթերին հայրեն ու տաղիկ:

գ. Ուշ-ուշ են գալիս, բայց ո՛չ ուշացած,
Ծնվում են նրանք ճիշտ ժամանակին:
Բայց ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց:

դ. Իմ մահվան օրը կիջնի լռություն,
Ծանր կնստի քաղաքի վրա,
Ինչպես ամպ մթին կամ հին տրտմություն,
Կամ լուր աղետի՝ թերթերում գրած:

1. Հ. Սահյան
2. Պ. Սևակ
3. Ե. Չարենց
4. Հ. Շիրազ

1) ա-4, բ-1, գ-2, դ-3
2) ա-1, բ-3, գ-2, դ-4
3) ա-2, բ-1, գ-4, դ-3
4) ա-4, բ-2, գ-3, դ-1

51 **Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը սխալ նշված:**

1) ՊՀԴ -874
2) ՈՀԸ- 678
3) ՏՇՀԸ- 4578
4) ՓՋՀԱ - 9971

52 **Ո՞ր շարքում է տրված բառի հնչյունափոխված արմատի տարբերակը սխալ վերականգնված.**

1) սննդակարգ → սնունդ
2) մեկուսի → կույս
3) կպչել → կիպ
4) ժուժկալ → ժույժ

53 **Համարակալված բառերում բաց թողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված.**

Տերևախիտ ճյուղերի մեջ լսվեց թռ-ունների(1) զվար-ածայն(2) երգը: Խ-ացին(3) արծաթագ-ծ(4) փշատենու երկար վարսերը, ար-եցնող(5) բուրմունք տարածեց թավշյա դեղձը՝ պ-ռուհու(6) նազանքով ու-ելով(7) մրգերի ծանրության տակ խոնարհած ճյուղերը: Ար-նացան(8) ծաղիկները՝ գինարբու-ը(9), սուսա-բարը(10), վարդը:

1) 1 - չ, 2 - թ, 3 - շշ, 4 - օ, 5 - բ, 6 - չ, 7 - ղղ, 8 - թ, 9 - կ, 10 - մ
2) 1 - չյ, 2 - թ, 3 - շ, 4 - ո, 5 - փ, 6 - ճ, 7 - ղղ, 8 - դ, 9 - ք, 10 - մ
3) 1 - չ, 2 - թ, 3 - շշ, 4 - օ, 5 - բ, 6 - ճ, 7 - ղղ, 8 - թ, 9 - կ, 10 - ն
4) 1 - չ, 2 - դ, 3 -շ, 4 - օ, 5 - բ, 6 - ճ, 7 - ղ, 8 - թ, 9 - ք, 10 – ն

54 **Քանի՞ փակ և քանի՞ բաց վանկ կա *մանրաքնին* բառում.**

1) երեք փակ
2) երեք փակ, մեկ բաց
3) երկու բաց, երկու փակ
4) մեկ բաց, մեկ փակ

55 **Ո՞ր շարքում են ճիշտ տրված հետևյալ օտար բառերի հայերեն համարժեքները՝**

ֆիլիալ, ֆորում, կոնկուրս, սուվերեն:

1) կրպակ, հրապարակ, մրցանակ, թագավորական
2) մասնաճյուղ, համաժողով, մրցույթ, ինքնիշխան
3) բաժին, սկահակ, փոխզիջում, բանաձև
4) գրասենյակ, համակարգ, առաջնություն, կարգավիճակ

56 **Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ *չեն:***

1) **թեր** -ծաղկաթերթ, **թեր** - կողմ
2) **գանձ** -հարստություն, **գանձ** -հոգևոր երգ
3) **սուր** - սրածայր, հատու, **սուր** - սրամիտ
4) **հազար** - թիվ, **հազար** – բույս

57 **Տրված բառիմաստները համապատասխանում են ձախ շարքի բառերից չորսին. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

ա. ոստան	1. երկտող բանաստեղծություն
բ. սնգույր	2. հոգևորականի գլխի ծածկոց
գ. բեյթ	3. թագավորանիստ քաղաք
դ. վեղար	4. շենքերը կայծակի հարվածից պաշտպանելու հարմարանք
ե. շանթարգել	

1) ա-1, բ-2, դ-3, ե-4
2) ա-2, բ-1, դ-3, ե-4
3) ա-3, բ-2, գ-1, դ-4
4) ա-3, գ-1, դ-2, ե-4

58 **Տրված բառերից քանիսի՞ արմատին կարող է միանալ *-անի* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):**

Հայրանուն, ընտանեկան, քաղաքապետ, տեսակավորել, միալեզու, երեց, ծիրան, նրբագեղ, ազատ, նամակատար:

1) չորսի
2) յոթի
3) հինգի
4) վեցի

59 **Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) ***արյունը ջուր դառնալ*** - սահմռկել, ***աչքերը փակել*** - մեռնել
2) ***աչքը ջուր կտրել*** - կարոտով, անհամբերությամբ սպասել, ***անձյուն ձմեռ*** - անճարակ մարդ
3) ***գլխարկը թեք դնել*** - նորաձև հագնվել, ***գլխին տալ*** - զոջալ
4) ***ժամավաճառ լինել*** - իզուր ժամանակ վատնել, ***երեսից կախվել*** - թախանձել

60 **Ո՞ր շարքում են միայն անհոգևական գոյականներ**:

1) Ֆիլիպիններ, մաթեմատիկա, քննություն, կաթ
2) գաղտնիք, գինի, աշակերտություն, մարմար
3) բարկողի, հանրահաշիվ, բեռ, հոգևորականություն
4) քիմիա, մթություն, դարվինիզմ, բնապաշտություն

61 **Նախադասություններից քանիսո՞ւմ հոդի սխալ գործածություն կա:**

1. Գնալս արդեն անիմաստ էր, քանի որ չէի կարող նրան օգնել:
2. Իր դիտարկումները նա մանրամասն նկարագրել էր և կատարել ընդ-հանրացումներ:
3. Ջուրն ելավ ափերից, ծածկեց շրջակա ցածրադիր տարածքները, և շատ տնտեսություններ տուժեցին հեղեղումներից:
4. Իմ՝ դեռևս ուսանողական տարիներին գնված գրքերիցս շատերը որոշել էի նվիրել գյուղի գրադարանին:

1) մեկում
2) երկուսում
3) բոլորում
4) ոչ մեկում

62 **Ընդգծված դերբայական ձևերից ո՞րն է սխալ:**

1) Գարնանային արևը **հալեցրել** էր ձյունը, ու վարարած գետերը դուրս էին եկել իրենց ափերից:
2) Խանութի բացման օրը բոլոր հյուրերին նվիրեցին **խոնավեցնող** քսուքներ:
3) Անծայրածիր հեռուներում աստիճանաբար **մգացող** լեռների սուր կատարները ահարկու տպավորություն էին թողնում:
4) Ես ամեն կերպ փորձում էի զգույշ **դիպչել** նրա վերքին, որպեսզի ցավ չպատճառեի:

63 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:**

1) Բայց հոգիս չունի ոչ մի հանգրվան,
Նորից թվում է ինձ ոսկե հեռուն:
2) Եվ տեսնում էի՝ զմրուխտ շորերով
Մի նավ էր սահում օրոր ու շորոր:
3) Հայրենի գետի զմրուխտ ափերին
Մեր հին տնակն է կքել մենավոր:
4) Իմ սիրտն այնտեղ է, ուր նախնիքը մեր
Կերտել են շքեղ կոթողներ հավերժ:

64 **Ո՞ր տարբերակում անկանոն բայ չկա:**

1) Աչքս դիպավ աչքի բոցին,
Ու գլուխըս կախեցի…
2) Տեսավ՝ ուտում են ամենքն ամենքին.
Ամեն հայրենիք՝ իրեն զավակին:
3) Ես չգիտեմ՝ ո՞ւր են տանում հեռավոր
Ուղիների ժապավեններն անհամար:
4) Ապիրա՛տ աշխարհ, ուր հզոր ոսկին
Դարձնում է գողին ազնիվ, բարեհույս:

65 **Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

Դամբարանի քողարկված մուտքը հայտնի դարձավ այն պահին, երբ ամեն ինչ մանրազնին ստուգելուց հետո պեղումներ կատարողը որոշեց դադարեցնել աշխատանքները:

1) քողարկված – հարակատար դերբայ
2) դադարեցնել – վաղակատար ձևաբայ
3) ամեն ինչ – որոշյալ դերանուն
4) հետո – կապ, հետադրություն

66 **Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ *կա:***

1) Մի քանի ՀՀ ճանաչված մարզիկներ նախապատրաստվում են օլիմպիական խաղերին:
2) Անձրևի մի խոշոր կաթիլ՝ սառն ու պինդ, դիպավ Մանեի ձեռքին:
3) Վերջապես կան և հնչյուններ՝ վերադարձի ու վերջին հույսի:
4) Լեռնե՜ր, ներշնչված դարձյալ ձեզանով, Թնդում է հոգիս՝ աշխույժով լցված:

67 **Նախադասություններից քանի՞սն են բարդ (նախադասությունները կետադրված չեն):**

1. Դարդը սրրտիս աղքատ ու խեղճ ցուպը ձեռքիս գլխիկոր
   Շատ տարիներ պանդուխտ եղած նորեն դարձա հայրենիք:
2. Երևի այդօր ցերեկը ձգվեց
   Քնից նոր զարթնած կտրիճի նման:
3. Ծննդկանի շուրջ նստեցին նրանք
   Որդուն մաղթելով արևշատություն
   Նորատի մորը շուտ ապաշխարանք
   Աղվորիկ մի հարս
   Բարի տատություն…
4. Այդ բոլոր մարդիկ իմ մահվան բոթից
   Որպես ընդհանուր աղետից սարսած
   Զարմացած կզգան ինձ այնքան մոտիկ…

1) մեկը
2) երկուսը
3) ոչ մեկը
4) երեքը

68 **Ո՞ր նախադասության մեջ բառակապակցությամբ արտահայտված որոշիչ կա:**

1) Վայում է քամին. ցուրտ, ձմեռնամուտ,
   Չոր տերևները շուրջս է դիզում:
2) Հայրենի գետի զմրուխտ ափերին
   Մեր հին տնակն է կքել մենավոր:
3) Խոսեցին անցած-գնացած օրերի մասին,
   Ապա քուն մտան անհոգ, բախտավոր:
4) Հուր-հավքերից՝ թևերն արծաթ,
   Ինձ կպատմեն ոսկի հեքիաթ:

69 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Դու այնպես ես խոսում, կարծես քեզ ոչինչ չի հետաքրքրում:
2. Ես լուռ հետևում էի, թե ինչպես էր նա հեռանում ինձանից:
3. Պարզ երևում էր, որ բոլորը նրանից դժգոհ էին:
4. Ինչու էր նա այդքան զայրացած՝ ես այդպես էլ չհասկացա:

ա. ձևի պարագա
բ. ուղիղ խնդիր
գ. հանգման խնդիր
դ. ենթակա
ե. պատճառի պարագա

1) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
2) 1-ա, 2-գ, 3-բ, 4-ե
3) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
4) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ

70 **Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

1) Աղջիկը քնից արթնանալուն պես շտապում էր դպրոց:
   Հենց որ աղջիկը քնից արթնանում էր, շտապում էր դպրոց:
2) Ես անհամբեր սպասում էի ընկերուհուս՝ քաղաք վերադառնալուն:
   Ես անհամբեր սպասում էի, որ ընկերուհիս քաղաք վերադառնար:
3) Դու հավատո՞ւմ ես ընկերոջդ՝ քեզ չխաբելուն:
   Դու հավատո՞ւմ ես ընկերոջդ, որ քեզ չի խաբում:
4) Այդ սրտառուչ երգը ահեղ մարտում ընկածների մասին է:
   Այդ սրտառուչ երգը այն մասին է, թե ինչպես նրանք ընկան ահեղ մարտում:

71 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ.**

-Արմե՛ն ջան, սիրելի՛ս, - ասաց մայրը, - ես ոչինչ չեմ խնայել քո ուսման համար,- և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց,- միանգամայն վստահ եմ՝ դու հայտնի իրավաբան ես դառնալու:

1) Մայրն ասաց սիրելի Արմենին, որ ինքը ոչինչ չի խնայել նրա ուսման համար, և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց, որ ինքը միանգամայն վստահ է՝ նա հայտնի իրավաբան է դառնալու:
2) Մայրն ասաց Արմենին և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց, որ ինքը ոչինչ չի խնայել նրա ուսման համար և միանգամայն վստահ է՝ նա հայտնի իրավաբան է դառնալու:
3) Մայրն ասաց Արմենին, որ ինքը ոչինչ չի խնայել նրա ուսման համար, և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց, որ ինքը միանգամայն վստահ է՝ նա հայտնի իրավաբան է դառնալու:
4) Մայրն ասաց Արմենին, որ ինքը ոչինչ չի խնայել նրա ուսման համար, և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց, որ միանգամայն վստահ է, որ ինքը հայտնի իրավաբան է դառնալու:

72 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պետք է դրվի:**

Հազար ինը հարյուր հիսունվեց թվականի ձմեռն այնքան խստաշունչ էր(1) որ Հայաստանի տաք վայրերի կաքավները(2) սարսռեցնող մրրկահողմերից ու սառնամանիքից(3) գրեթե բնաջնջվեցին: Սովալլուկ ու ցրտահար թռչունները(4) այդ խեղճ ու անօգնական թռչունները(5) ճարահատյալ իջնում էին բակերում ու տնամերձ այգիներում կեր հայթայթելու(6) և նրանցից շատերը զոհ էին գնում մարդկանց: Այդ անօրինակ ծանր պայմաններից թռչուններն այնքան էին հյուծվել ու թուլացել որ մարդիկ(7) որևէ դժվարություն չզգալով(8) բռնում էին նրանց պահում իրենց տներում(9) որպեսզի գիրացնելուց հետո մորթեն: Անհրաժեշտ էր որկրամոլ մարդկանցից փրկել անօգնական թռչուններին(10) այդ վայրերի երկնակարկառ ապառաժների յուրօրինակ զարդերին:

1) 1, 5, 6, 7, 8, 9
2) 1, 4, 6, 7, 8, 9
3) 1, 2, 3, 4, 6, 7, 8, 9
4) 1, 4, 5, 6, 7, 8, 9, 10

73 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

1. Արևմտահայաստանը՝ փոթորկված ծովից դուրս նետված ավազի նման ահագին բազմություններ էր կուտակել Արարատյան դաշտում. քանդված և այրված իրենց քաղաքներից և գյուղերից փախած այդ մարդիկ անվերջանալի խմբերով անցել էին սահմանը և քայլել անեծք թափելով:
2. Հայերը (ինչպես բոլոր իրապաշտ մարդիկ) դյուրին կերպով տարվում են բանաստեղծական պատկերներով. այն, ինչից կտրված են՝ միշտ էլ դրախտի մի կտոր է:
3. Նվագում էր այս անգամ ոչ թե լեռնականների մարդկանց սրտերը շարժող կորովի երգը, որից բորբոքվում էր արյունը, այլ հովվական պարզ մի երգ:
4. Ես բացում եմ ուղեգրությունների իմ տետրը. նրա մեջ սուսամբարի երկու տերև՝ գորշ ու չոր, ինչպես հանգած մոխիր, իսկ լեռների վրա վրնջում է իմ ձին՝ ինչպես շատ տարիներ առաջ:

1) մեկում
2) երկուսում
3) երեքում
4) չորսում

74 **Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Վեց գիրք ընտրեցի, որոնք միասին նույնքան էին կշռում, ինչքան գերմաներեն գիրքը:

1. վեց (ա. որոշիչ, բ. չափի պարագա, գ. ձևի պարագա)
2. որոնք (ա. ուղիղ խնդիր, բ. ենթակա, գ. ստորոգելի)
3. նույնքան (ա. որոշիչ, բ. ձևի պարագա, գ. չափի պարագա)
4. կշռում էին (ա. բաղադրյալ ստորոգյալ, բ. պարզ ստորոգյալ, գ. ստորոգելի)

1) 1- բ, 2- բ, 3-գ , 4- գ
2) 1- գ, 2- ա, 3- բ, 4- բ
3) 1- բ, 2- գ, 3- ա, 4- ա
4) 1- ա, 2- բ, 3- գ, 4-բ

75 **Պնդումներից որի՞ մեջ կա սխալ:**

1) Վարչական ոճին բնորոշ հատկանիշներն են հատուկ բառապաշարի՝ վարչաբանությունների օգտագործումը, փոխաբերությունների, կաղապարային բառակապակցությունների և քերականական ձևերի գործածումը:
2) Գեղարվեստական ոճին բնորոշ են խոսքի հուզականությունը, պատկերավորությունը: Իր ամբողջության մեջ գեղարվեստական խոսքը չունի ոճական միասնականություն. նրանում կարող են առկա լինել մյուս բոլոր ոճերի դրսևորումներ:
3) Հրապարակային խոսքը պետք է լինի հուզական և կրքոտ, այն պետք է ճիշտ կառուցվի և ունենա սկիզբ կամ մուտք, հիմնամաս, խոսքի ավարտ կամ ամփոփում:
4) Գիտական ոճին բնորոշ են խոսքի ճշգրտությունը, տրամաբանական դատողությունները, բառերի գործածությունը ուղղակի իմաստով, տերմինների, մասնագիտական բառերի գործածումը:

76 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Սեղմված օդով լցված անվադողը տառացիորեն նվաճեց ամբողջ աշխարհը: Եվ դա այն պատճառով, որ ավելի ճկուն անիվ գոյություն չունի: Ոչ մի զսպանակ ճկունությամբ չի կարող մրցակցել անվադողի օդախցիկում լցված օդի հետ:
2. Սեղմված օդ պարունակող դողով անիվը հայտնագործել է անգլիացի ճարտարագետ Թոմսոնը 1845 թվականին: Բայց նրա հայտնագործությունը շուտով մոռացվեց. անվադողի գլխավոր «պահանջատերը»՝ ավտոմեքենան, դեռ գոյություն չուներ:
3. Անցավ 48 տարի: Եվ ահա Թոմսոնի գաղափարը կյանքի կոչեց մեկ ուրիշ գյուտարար՝ շոտլանդացի անասնաբույժ Դենլոպը, որը հայտնագործեց հեծանվադողը:
4. Կան գյուտեր, որոնք մոռացվում և ապա «ծնվում» են երկրորդ անգամ: Դրանցից է, օրինակ, անվադողի գյուտը:

1) 1, 3, 4, 2
2) 2, 3, 1, 4
3) 3, 1, 4, 2
4) 4, 2, 3, 1

77 **Ո՞ր միտքը չի հակասում շարադրանքի բովանդակությանը:**

Օձերի աչքերը, ի տարբերություն այլ կենդանիների, ունեն յուրահատուկ կառուցվածք: Սովորական օձերն «ակնոց» են կրում և մինչև իրենց կյանքի վերջը մի քանի անգամ փոխում են այդ ակնոցը: Օձերի աչքերը մյուս կենդանիների նման անթափանց կոպերով ծածկված չեն, այլ ունեն թափանցիկ կոպեր, որոնք ակնախոռոչներին կպած են այնպես, ինչպես մարդու ակնոցի ապակիները՝ շրջանակին: Երբ մոտենում են մաշկը փոխելու օրերը, այդ «ակնոցներն» աղոտանում են, և օձերի տեսողությունը վատանում է: Մաշկափոխության ժամանակ օձերը դեն են նետում իրենց ամբողջ շապիկը այդ յուրատեսակ «ակնոցի» հետ միասին: Հետագայում առաջ են գալիս նոր կոպեր՝ բոլորովին մաքուր ու թափանցիկ:

1) Կենդանիների աչքերը, ի տարբերություն մարդու, սովորաբար ծածկված են անթափանց կոպերով:
2) Օձերը իրենց «ակնոցը» ավելի հաճախ են փոխում, քան մաշկը:
3) Օձերի կոպերը մարդու ակնոցի ապակիների նման կարծր են:
4) Մաշկափոխության ժամանակ օձերի տեսողությունը վատանում է:

78 **Ո՞ր շարքի բոլոր ստեղծագործություններն են պոեմներ:**

1) «Հառաչանք» (Հ. Թումանյան), «Սոմա» (Ե. Չարենց), «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» (Պ. Սևակ)
2) «Աբու-Լալա Մահարի» (Ավ. Իսահակյան), «Հին աստվածներ» (Լ. Շանթ), «Մատյան ողբերգության» (Գրիգոր Նարեկացի)
3) «Բիբլիական» (Հ. Շիրազ), «Արա Գեղեցիկ» (Ն. Զարյան), «Թմկաբերդի առումը» (Հ. Թումանյան)
4) «Հայրենի հողը» (Ավ. Իսահակյան), «Ամբոխները խելագարված» (Ե. Չարենց), «Հարճը» (Դ. Վարուժան)

79 **Նշված առանձնահատկություններից քանի՞սը բնորոշ չեն ռեալիզմին:**

ա. Պատկերում է կյանքը այնպես, ինչպես որ կա:
բ. Ձգտում է պատկերել կյանքում տիպականը:
գ. Ներկայացնում է բացառիկ անհատների, որոնք հակադրվում են գորշ իրականությանը:
դ. Ներկայացնում է այնպիսի կերպարներ, որոնք անխզելիորեն կապված են որոշակի սոցիալական միջավայրի հետ:

1) մեկը
2) երկուսը
3) երեքը
4) ոչ մեկը

80 **Երկտող տներից կազմված բանաստեղծությունը, որում տների երկրորդ տողերը հանգավորվում են առաջին տան տողերի հետ, կոչվում է՝**

1) սոնետ
2) հայրեն
3) տրիոլետ
4) գազել